

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Աշխեն Սողոմոնյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

Տնտեսական ընկերությունների լուծարումը իրավաբանական անձի դադարմանն ուղղված ընթացակարգերից մեկն է, որի մանրամասն կարգավորման և ուսումնասիրման անհրաժեշտությունը ունի գործնական և տեսական կարևոր նշանակություն, քանի որ դրանից մեծապես կախված են ինչպես ընկերության մասնակիցների, այնպես էլ դրա պարտատերերի իրավունքների պաշտպանության, քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման գործուն և արդյունավետ միջոցների նախատեսումը և կիրառությունը: Այդ առումով տեսականորեն և գործնականում կարևոր են այս ընթացակարգի շրջանակներում իրականացվող գործողությունների խմբավորումը, մանրակրկիտ ուսումնասիրությունը և դրանց կարգավորման վերաբերյալ ժամանակակից միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Որոշ տեսաբաններ գտնում են, որ լուծարումը իրավաբանական փաստերի համախումբ է, որոնց վրա հասնելը անհրաժեշտ է լուծարման նպատակին, այն է՝ իրավաբանական անձի դադարմանը հասնելու համար. օրինակ՝ օրենքով այդ փաստերի որոշակի հաջորդականության սահմանումը, լուծարման իրականացման ժամկետի նախատեսումը¹: Իսկ այլ հեղինակներ, ելնելով իրավաբանական անձանց լուծարման օրենքով նախատեսված հիմքերից, իրավաբանական անձանց լուծարման կարգը դիտարկում են ավելի նեղ իմաստով՝ այն բաժանելով երկու տեսակի՝ կամավորի և հարկադիրի²: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է սահմանազատում անցկացնել իրավաբանական անձի լուծարման հիմքերի և կարգի միջև: Օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված են իրավաբանական անձի լուծարման հիմքերը, այսինքն՝ նախատեսված են որոշակի իրավաբանական փաստեր, որոնց հետ օրենքը կապում է իրավաբանական անձի գոյության դադարման հնարավորությունը լուծարման ձևով, իսկ լուծարման կարգի վերաբերյալ անմիջական կարգավորումները նախատեսված են Օրենսգրքի 69-րդ հոդվածում: Հետևաբար ենթադրվում է, որ **իրավաբանական անձանց կամավոր լուծարման կարգը, անկախ լուծարման հիմքերից, իրավաբանական անձի լուծարման իրականացմանն ուղղված, օրենքի նորմերով նախատեսված և կարգավորվող ընթացակարգեր են:**

Իրավաբանական անձի լուծարումն իրականացվում է իրար հաջորդող բազմաթիվ գործողությունների միջոցով, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

ա) իրավաբանական անձի լուծարման մասին որոշման ընդունումը, իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած մարմնի պարտականությունների կատարումը մինչև միջանկյալ լուծարման հաշվեկշռի հաստատումը,

¹ Տե՛ս **Габов А. В.** Ликвидация юридических лиц. История развития института в российском праве, современные проблемы и перспективы. – М.: Статут, 2011, էջ111:

² Տե՛ս **Садиков О. Н.** (ред.) Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации (части первой) (постатейный) М.: КОНТРАКТ: ИНФРА-М, 2005. https://www.studmed.ru/view/sadikovon-kommentariy-k-grazhdanskomu-kodeksu-rf-chasti-pervoyvtoroypostateynyy_3ede841cd44.html?page=9 (վերջին այցելություն՝ 1.07.20 թվական)

բ) լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը և պարտատերերի պահանջների բավարարումը,

գ) լուծարման ամփոփիչ հաշվեկշռի հաստատումը և իրավաբանական անձի դադարումը:

Այս առիթով տարբեր հեղինակներ, տարբեր չափանիշներից ելնելով, փորձ են արել լուծարման գործընթացը բաժանել մասերի: Օրինակ՝ Ն. Ե. Վալերևնան իրավաբանական անձի լուծարման կարգը բաժանել է 3 փուլերի՝ իրավաբանական անձի լուծարում և դրա կառավարմանն ուղղված իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) իրավունքների դադարեցում, իրավաբանական անձի պարտականությունների դադարում, իրավաբանական անձի՝ իր գույքի նկատմամբ իրավունքների դադարում և իրավաբանական անձի լուծարման ավարտ¹: Մեր կարծիքով՝ իրավաբանական անձի լուծարման գործընթացի շրջանակներում իրականացվող գործողությունները որոշակի խմբերում միավորելը ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ դրա միջոցով կարելի է սահմանափակել լուծարման տարբեր փուլերում առանձին որոշումների և գործողությունների բողոքարկման ժամկետները, ավելի արդյունավետորեն իրականացնել լուծարման հանձնաժողովի առջև դրված խնդիրները: Որպես օրինակ կարելի է նշել, որ մեր կողմից առաջարկվել է իրավաբանական անձի լուծարման մասին որոշումը բողոքարկելու և անվավեր ձանաչելու հնարավորությունը կիրառել մինչև լուծարման ամփոփիչ հաշվեկշռի հաստատումը, այսինքն՝ գործնականում լուծարման գործընթացի միջև վերը ներկայացված երկրորդ խմբում ներառված գործողությունների ավարտը: Այս տրամաբանության կիրառումն արդյունավետ է նաև այնքանով, որ հաշվի առնելով լուծարման ողջ գործընթացի իրականացման համար ընդհանուր 12-ամսյա ժամկետ սահմանելու վերաբերյալ մեր առաջարկը՝ առանձին գործողությունների և որոշումների բողոքարկման պահը կարելի է սահմանափակել լուծարման գործընթացի այս կամ այն փուլի ավարտով, այլ ոչ թե սահմանել այդ գործողությունների իրականացման առանձին ժամկետներ:

Այժմ անդրադառնանք յուրաքանչյուր խմբում ներառված գործողություններին առանձին-առանձին: Այսպես, առաջին խմբում ներառված են իրավաբանական անձի լուծարման մասին որոշման կայացումից մինչև միջանկյալ հաշվեկշռի հաստատումը կատարման ենթական գործողությունները: Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը պարտավոր են այդ մասին **անհապաղ** տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին, որն իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում տվյալ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին²: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական ան-

¹ Տե՛ս **Валерьевна Н. Е.** Ликвидация юридических лиц по законодательству РФ, дисс. ... канд. наук, М., 2005, էջեր՝ 131-168:

² «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետով և նախատեսված է, որ լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա՝ առանց որևէ ժամկետ նախատեսելու: **Այստեղ հակասություն կա Օրենսգրքի 47-րդ հոդվածի հետ. Օրենսգրքով նախատեսված է, որ լուծարման գործընթացի սկզբի մասին տեղեկությունները տրամադրում է որոշումն ընդունած մարմինը, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» մասին օրենքով այդ պարտականությունը վերապահվել է լուծարման հանձնաժողովին: Մեր կարծիքով՝ նման հակասությունն անընդունելի է, և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավապարզավորումը պետք է համապատասխանեցվի Օրենսգրքին:**

ծի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը նշանակում են լուծարման հանձնաժողով (լուծարող) և, սույն օրենսգրքին համապատասխան, սահմանում են լուծարման կարգն ու ժամկետները¹: Նշված գործողությունների փախկապակցվածությունը կասկած չի առաջացնում, քանի որ մինչև լուծարման հանձնաժողով չձևավորվի, լուծարման կարգն ու ժամկետները չսահմանվեն, և պետական գրանցամատյանում գրառում չկատարվի իրավաբանական անձի լուծարման մեջ գտնվելու վերաբերյալ, լուծարման գործընթացը չի կարող շարունակվել: Քանի որ օրենքի նորմը որոշակիությամբ աչքի չի ընկնում, ինչը արդեն քննադատվել է մեր կողմից, շատ հաճախ լուծարման գործընթացը կարող է շարունակություն չունենալ: Գրականության մեջ խնդրահարույց է համարվում նաև այն հարցը, թե ինչպիսի իրավական հետևանքեր կարող են առաջանալ, եթե իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը չկատարեն Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունը²: Ստացվում է, որ իրավաբանական անձը կարծես թե մնում է «երկրի ու երկնքի միջև», քանի որ, չնայած լուծարման մասին որոշման ամրապայմանը, գործնականում այդ գործընթացը դեռևս չի սկսել, քանի դեռ չի կատարվել համապատասխան գրառումը: Ավելին, այս խնդիրը չի կարող լուծվել նաև երրորդ անձանց նախաձեռնությամբ, թեև ակնհայտ է՝ իրաբանական անձի նման անորոշ կարգավիճակը կարող է անդրադառնալ մեծ թվով սուբյեկտների, այդ թվում նրա հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձանց շահերի վրա: Սակայն գտնում ենք, որ հիմնադիրների (մասնակիցների) իրավաբանական անձը կամավոր լուծարելու վերաբերյալ որոշումը չկատարելը չի կարող հարկադիր լուծարման հիմք հանդիսանալ, եթե, իհարկե, այդ իրավաբանական անձի գործունեության մեջ չկան օրենքի կոպիտ կամ բազմակի խախտումներ: Կան տեսաբաններ, որոնք այս հարցի կապակցությամբ ունեն այլ մոտեցումներ: Մասնավորապես Գ. Ֆ. Շերշենևիչը նշել է, որ այն պահից սկսած, երբ բաժնետիրական ընկերությունը որոշել է դադարեցնել իր գործունեությունը, և դրա հիմնական նպատակը դարձել է գույքը բաժանելը, փոփոխվում է նաև դրա կողմից իրականացվող գործողությունների շրջանակը: Նրա ներկայացուցիչների կողմից կնքվող բոլոր գործարքները, որոնք դուրս են լուծարման շրջանակներից, պետք է ձանաչվեն անվավեր: Այդ վտանգը չեզոքացնելու համար երրորդ անձանց համար պետք է հայտնի լինի ընկերության լուծարման մեջ գտնվելու փաստը³: Այլ խոսքերով ասած՝ իրավաբանական անձի լուծարման վերաբերյալ որոշումը հան-

¹ Այս հարցի հետ կապված գտնում ենք, որ լուծարման կարգն ու ժամկետները պետք է սահմանվեն իրավաբանական անձի լուծարման մասին միասնական որոշման մեջ:

² «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման» մասին ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը մասնրամասն կարգավորում է, թե իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին գործակալության կողմից գրառում կատարելու համար իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կամ օրենքով կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմինը կամ նրանց լիազորած անձը գործակալություն ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն: Սակայն այս օրենքով ևս նշված չէ, թե ինչ **ժամկետում** պետք է դրանք ներակայացվեն, այսինքն՝ մնում է առաջնորդվել Օրենսգրքով նախատեսված **անհապաղ** գնահատողական ժամկետով: Մեր կարծիքով՝ գոնե նշված օրենքի 47-րդ հոդվածում պետք է կոնկրետ ժամկետ նախատեսվի դիմում և փաստաթղթերը ներկայացնելու համար, և մենք առաջարկում ենք սահմանել երեք աշխատանքային օրը:

³ Տե՛ս **Шершеневич Г.Ф.** Курс торгового права. Т. 1: Введение. Торговые деятели. — М., Статут, 2003, էջ 440:

գեցնում է դրա իրավասուբյեկտության ծավալի նվազմանը, իսկ լուծարման գործընթացից բխող գործարքները պետք է ճանաչվեն անվավեր: Գրականության մեջ, ինչպես նաև օրենքներում, իրավաբանական անձի լուծարման մասին որոշումն ընդունելու հետևանքներին անհրաժեշտ ուշադրություն չի հատկացվում, և ընդունված կարծիք է, որ իրավաբանական անձի լուծարման վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառում կատարելուց մինչև իրաբանական անձին այդ գրանցամատյանից հանելը նրա իրավասուբյեկտությունը որևէ փոփոխության չի ենթարկվում: Երբեմն նույնիսկ իրարամերժ կարծիք է արտահայտվում այն մասին, թե իրավաբանական անձի լուծարման մասին որոշում կայացնելուց և լուծարման հանձնաժողով նշանակելուց հետո իրաբանական անձի իրավասուբյեկտությունը չի փոփոխվում, քանի որ լուծարման հանձնաժողովը կառավարման մարմին չէ և կառավարչական գործառույթներ է իրականացում ոչ թե իրավաբանական անձի գործունեությունը կազմակերպելու, այլ օրենքով իր առջև դրված խնդիրները լուծելու համար¹: ՀՀ դատական պրակտիկայում անդրադարձ է կատարվել իրավաբանական անձի՝ արդեն ստանձնած պարտավորությունների ճակատագրին², իսկ լուծարման գործընթացում գտնվող իրավաբանական անձի իրավասուբյեկտության սահմանափակմանը կամ նրա կողմից ստանձնվող նոր պարտավորությունների մասով որևէ նշում չկա: Արդյունքում հնարավոր են այնպիսի դեպքեր, երբ տնտեսական ընկերությունը լուծարելու և լուծարման հանձնաժողով նշանակելու մասին որոշում ընդունվի միտումնավոր, որպեսզի իրավաբանական անձի կառավարման բոլոր լիազորությունները հանձնվեն սահմանափակ թվով անձանց կամ նույնիսկ մեկ անձի, և անհրաժեշտ դեպքերում չհրավիրվի ընդհանուր ժողով, իսկ հետագայում որպես արդյունք լուծարային հանձնաժողովը ցրվում է, իսկ տնտեսական ընկերությունն իր գործունեությունը շարունակում է բնականոն հունով³: Ուստի նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք **Օրենսգրքի 68-րդ հոդվածում կատարել անրաժեշտ փոփոխություններ և 1-ին կետում «անհապաղ» բառը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» արտահայտությամբ**: Ինչպես նաև այն լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**Իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի կողմից նշված ժամկետում տեղեկությունները պետական գրանցում իրականացնող մարմնին չհայտնելու դեպքում իրավաբանական անձի լուծարման մասին որոշումը համարվում է չընդունված**»:

Ինչ վերաբերում է լուծարման գործընթացում գտնվող իրավաբանական անձի գործունակության սահմանափակմանը, ապա գտնում ենք, որ այս հարցին ևս պետք է օրենքով լուծում տրվի, և առաջարկում ենք Օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-

¹ Ст'я Ломакин Д. В. Общие положения об органах акционерного общества // Вестник Московского университета. Серия 11: Право. 2003, № 4., 2003, էջեր՝ 41-44, **Козлова Н.В.** Правосубъектность юридического лица. - М., 2005. <https://studfile.net/preview/5997311/> (վերջին այցելությունը՝ 07.07.2020):

² Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը ՎԴ1/0063/05/08, ՎԴ1/0091/05/10, ՎԴ/2317/05/10, ՎԴ0790/05/19, ՎԴ/0237/05/10, ՎԴ/2469/05/09 քաղաքացիական գործերով նշել է, որ եթե ընկերության լուծարման կամ գործունեության դադարեցման մասին պետական գրանցամատյանում որևէ գրառում չի կատարվել, ընկերությունը թեև գտնվում է լուծարային գործընթացում, սակայն իրավաբանորեն համարվում է գոյություն ունեցող: Դրանից բխում է, որ ընկերությունը պարտավոր է կատարել օրենքի հիման վրա առաջացած բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջացած պարտավորությունները:

³ Ст'я Пендюрин Н. Обратимость ликвидации // ЭЖ-Юрист, 2004, № 43. <http://base.garant.ru/5125309/> (վերջին այցելությունը՝ 07.07.2020):

րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**Լուծարման մասին որոշման կայացման պահից իրավաբանական անձը չի կարող ստանձնել լուծարման նպատակներից չբխող պարտականություններ**»¹: Նման մոտեցումը միանգամայն արդարացված է, քանի որ լուծարման մասին որոշում կայացնելուց հետո իրավաբանական անձը ձեռք է բերում նպատակային իրավասուբյեկտություն, և նրա բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն միմիայն լուծարման գործընթացը ավարտին հասցնելուն: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենքով լուծարվող իրավաբանական անձի գործունակությունը սահմանափակելը տարածված պրակտիկա է: Որպես օրինակ կարելի է նշել Գերմանիայի քաղաքացիական կանոնակարգը, որի 49-րդ պարագրաֆում նախ թվարկված են լուծարողի գործնելության նպատակները, և ապա նախատեսվում է՝ լուծարողները կարող են նոր գործարքներ կնքել միայն այն դեպքում, եթե դրանք անհրաժեշտ են ընթացիկ գործերը ավարտելու համար: Համանման նորմ կա նախատեսված նաև Լատվիայի Հանրապետության Առևտրային օրենսգրքի 322-րդ հոդվածի համաձայն՝ լուծարողը կարող է կնքել միայն այնպիսի գործարքներ, որոնք անհրաժեշտ են բաժնետիրական ընկերության լուծարման համար²:

Լուծարման հանձնաժողովի ձևավորումից հետո այն ձեռնամուխ է լինում իր գործառույթների իրականացմանը: Առաջին գործողությունը, որը լուծարման հանձնաժողովը կատարում է, <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն գետեղելն է կազմակերպության լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Պետք է նկատել, որ Օրենսգրքով չի նախատեսվում, թե ինչ ժամկետում պետք է այդ հայտարարությունը գետեղվի, ինչն իր հերթին հանգեցնում է մի շարք խախտումների, որոնք արտահայտվում են լուծարվող առևտրային ընկերության կողմից իր պարտատերերի հանդեպ պարտականությունները չկատարելով³: Լուծարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը լուծարման իրականացմանը և այդ ընթացակարգով սահմանաված նպատակների հասնելուն ուղղված իրավաբանական անձի կողմից իրականացվող իրավաբանական կարևոր գործողություններից մեկն է և պետք է նպաստի լուծարման ընթացակարգի հետևողական և արդյունավետ իրականացմանը և շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովմանը:

Այս գործողությունների շրջանակում լուծարման հանձնաժողովը նաև միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու և դեբիտորական պարտքը ստանալու ուղղությամբ: Նման հաշվապահական տերմինի օգտագործումը քաղաքացիական օրենսդրության մեջ, կարծում ենք, արդարացված չէ: Բանն այն է, որ ինչպես գրականության, այնպես էլ օրենսդրության մեջ «դեբիտորական պարտք» եզրույթն օգտագործվում է մի քանի իմաստներով: Սասնավորապես, դեբիտորական պարտքների մեջ ներառվում են ինչպես այն պարտավորությունները, որոնց կատարման ժամկետները լրացել են (ժամկետանց դեբիտորական պարտք), այն-

¹ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված է, որ լուծարման ընթացքում գտնվող Ընկերությունն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն Ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում: Սակայն այս կանոնը տարածվում է միայն բաժնետիրական ընկերությունների վրա, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար նման կանոն չի գործում, ուստի միասնականության ապահովման տեսանկյունից շատ կարևոր է, որ այդ հարաբերությունները նույնական կարգավորում ստանան:

² http://www.pravo.lv/likumi/02_kz.html (վերջին այցելությունը՝ 13.07.2020):

³ St' u **Филиппов В. Г.** Порядок ликвидации коммерческих организаций, Вестник КемГУ, 2013, № 3 (55), Т. 1, էջ 299:

պես էլ այն պարտավորությունները, որոնց կատարման ժամկետները պետք է լրանան որոշակի ժամանակ անց (ընթացիկ դեբիտորական պարտք)¹: Նշված նորմի բառացի մեկնաբանության արդյունքում կարելի է ենթադրել, որ լուծարման հանձնաժողովն իրավունք ունի պահանջելու այդ պարտավորությունների վաղաժամկետ կատարում, ինչը չի համապատասխանում իրականությանը: Այս հարցի հետ կապված արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ, օրինակ, Գերմանիայի քաղաքացիական կանոնակարգի 49-րդ պարագրաֆում «դեբիտորական պարտք» տերմինի փոխարեն օգտագործվում է «պարտք» բառը²: Նույն կարգավորումն է նախատեսված նաև Ուկրաինիայի քաղաքացիական օրենսգրքի 111-րդ հոդվածով³: *Ուստի առաջարկում ենք Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ «դեբիտորական պարտք» տերմինը փոխարինել «պարտքեր»-ով:*

Լուծարման մասին որոշման կայացման և լուծարման հանձնաժողով նշանակելու պահից լուծարվող իրավաբանական անձի իրավասուբյեկտությունը փոխվում է, և նա կարող է իրականացնել միայն այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են լուծարման նպատակներին: Իսկ այդ գործողություններից մեկը լուծարվող իրավաբանական անձի՝ իր պարտատերերի հանդեպ պարտավորությունները դադարեցնելն է: Այդ նպատակով լուծարման հանձնաժողովը հայտնաբերում է ընկերության պարտատերերին և գրավոր ծանուցում լուծարման վերաբերյալ: Սակայն Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին կետի տրամաբանական վերլուծությունից կարելի է ենթադրել, որ լուծարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման պահից պարտատերերը կարող են իրենց պահանջները ներկայացնել լուծարվող իրավաբանական անձին, սակայն միանգամայն պարզ չէ, թե արդյոք այդ իրավունքից օգտվում են բոլոր պարտատերերը, թե միայն նրանք, որոնց պարտավորությունների կատարման ժամկետը վրա է հասել: Իսկ այն պարտատիրոջ նման պահանջը, որի պարտավորության կատարման ժամկետը դեռ վրա չի հասել, ոչ այլ ինչ է, եթե ոչ պայմանագրի փոփոխման կամ լուծման պահանջ: Օրենսգրքի 466-րդ հոդվածը, որը վերաբերում է պայմանագիրը փոփոխելուն և լուծելուն, նախատեսում է, որ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր են կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Իսկ կողմերից մեկի պահանջով այն կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Ստացվում է, որ մի դեպքում Օրենսգրքի 466-րդ հոդվածը նախատեսում է պայմանագիրը մի կողմի պահանջով փոփոխելու կամ լուծելու հնարավորություն՝ հղում կատարելով ի թիվս այլոց օրենքով նախատեսված այլ դեպքերի, մյուս դեպքում լուծարմանը վերաբերող նորմերը չեն նախատեսում նման հնարավորություն, և ստացվում է, որ լուծարվող իրավաբանական անձի այն պարտատերերը, որոնց նկատմամբ պարտավորությունների կատարման ժամկետը դեռ վրա չի հասել, չեն կարող ներկայացնել պահանջներ լուծարման հանձնաժողովին: Սա կարելի է համարել ՀՀ քաղաքացիական օրենսդրության էական բացթողումներից մեկը: Բայց լուծարվող ընկերության պարտատերերի իրավունք-

¹ Ст'я Дибяева М. Р. , Грошев А. Р., Дебиторская задолженность компании: сущность и значение // Вестник науки и образования. 2019, №3-1 (57), էջեր 26-29:

² <http://oceanlaw.ru/wp-content/uploads/2018/02/1900-%D0%93%D1%80%D0%B0%D0%B6%D0%B4%D0%B0%D0%BD%D1%81%D0%BA%D0%BE%D0%B5-%D1%83%D0%BB%D0%BE%D0%B6%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-1.pdf> (վերջին այցելությունը 9.07.2020 թվական):

³ <https://meget.kiev.ua/kodeks/grazdanskiy-kodeks/glava-7/> (վերջին այցելությունը 9.07.2020 թվական):

ների պաշտպանության համար անհրաժեշտ է կատարել որոշակի փոփոխություններ¹:

Իրավաբանական անձի լուծարման առաջին խմբում ներառված գործողություններին վերջինը միջանկյալ հաշվեկշիռ կազմելն է: Այսպես, Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է, որ պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող իրավաբանական անձի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին: Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում են լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը:

«Բանկերի ու բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով միջանկյալ լուծարման հաշվեկշիռի հաստատման ընթացակարգի հետ կապված նախատեսված են որոշակի լրացուցիչ պահանջներ: Այսպես, նշված օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված է, որ լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկություններ լուծարվող բանկի գույքի կազմի մասին, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ բանկի հաշվեկշիռում արտացոլված կամ բանկին ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր ավանդատուին, վարկատուին կամ այլ պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և սույն օրենքով սահմանված՝ պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը այդ պահանջների քննարկման արդյունքների մասին, Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ տեղեկություններ: Ինչպես նկատում ենք, «Բանկերի ու բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում խոսք չկա լուծարման միջանկյալ հաշվեկշիռը լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի կողմից հաստատելու մասին, այլ այդ իրավասությունը վերապահված է լուծարման հանձնաժողովին:

Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի կողմից հաստատելու փաստը չունի ո՛չ գործնական, ո՛չ էլ տեսական որևէ հիմնավորում: Իրականում, եթե իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) լուծարման մասին որոշում ընդունելու և լուծարման հանձնաժողովը նշանակելու պահից կորցնում են իրավաբանական անձի գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը, իսկ լուծարման հանձնաժողովը համարվում է լուծարվող իրավաբանական անձի գործերի կառավարմամբ զբաղվող միակ մարմինը, ապա ինչո՞վ կարելի է հիմնավորել նշված սուբյեկտների կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու իրավունքի առկայությունը: Իսկ այն չհաստատելու պարագայում լուծարման գործընթացը չի՞ կարող ունենալ շարունակականություն: Հետևաբար ծագում է խիստ գործնական մի հարց՝ ինչպե՞ս վարվել, եթե լուծարման միջանկյալ հաշվեկշիռը կազմվել է բոլոր

¹ Հակ է նշել, որ գործնականում հաշվի առնելով նման իրավիճակների ի հայտ գալու հնարավորությունները՝ պայմանագրային հարաբերությունների մասնակիցները փորձում են նման իրավիճակները կարգավորել պայմանագրով, և իրավաբանական անձի լուծարման գործընթացը սկսելը դատում են պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հիմքերի շարքին՝ դրանից բխող ինքնատիպ մոտեցումներով և կարգավորումներով:

կանոններին համապատասխան, իսկ, օրինակ, բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը իրաժարվում է այն հաստատել: Նման իրավիճակը միանգամայն հավանական է, քանի որ այս կամ այն որոշմանը դեմ կամ կողմ քվերակելը կամ ձեռնպահ մնալը յուրաքանչյուր բաժնետիրոջ իրավունքն է, և նա այդ իրավունքը իրագործում է սեփական հայեցողությամբ: Դրա անհրաժեշտությունը չի կարող հիմնավորվել նաև այն հակափաստարկով, թե այդպիսով բաժնետերերը կարող են վերահսկել լուծարման հանձնաժողովի գործունեությունը, քանի որ այդ իրավունքը նրանց այսպես թե այնպես պատկանում է: Եթե ուսումնասիրենք այլ երկրների փորձը, ապա կտեսնենք, որ որոշ երկրներում ընդհանրապես չի խոսվում միջանկյալ լուծարման հաշվեկշռի մասին, այլ լուծարման հանձնաժողովը պարտավոր է ներկայացնել միայն լուծարման հաշվեկշիռ: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը, որը որպես փաստաթուղթ ամրագրում է լուծարվող իրավաբանական անձի գույքային դրությունը վերլուծելու ուղղությամբ կատարված լուծարման հանձնաժողովի գործունեությունը, պետք է հաստատվի հենց իր՝ լուծարման հանձնաժողովի կողմից: *Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետի ավարտից հետո լուծարման հանձնաժողովը կազմում և հաստատում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող իրավաբանական անձի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին»: Առաջարկում ենք համանման փոփոխություն կատարել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում և նախատեսել, որ. «Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է լուծարման հանձնաժողովը»¹:*

Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը արտացոլում է լուծարվող տնտեսական ընկերության գույքային և ֆինանսական դրությունը, այսինքն՝ դրա ակտիվներն ու պասիվները պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը ավարտվելու պահի դրությամբ: Հետևաբար մինչև լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը արգելվում է պարտատերերի պահանջների բավարարումը:

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում ներառված երկրորդ խումբ գործողություններից վերջինը լուծարման միջանկյալ հաշվեկշռի հիման վրա պարտատերերի պահանջների բավարարումն է²:

Իրավաբանական անձի լուծարման ընթացակարգի վերջին՝ ավարտական մասը ընդգրկում է լուծարման ամփոփիչ հաշվեկշռի հաստատմանն ու իրավաբանական անձի դադարմանն ուղղված գործողությունները: Օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ, որը հաստատում են իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական ան-

¹ Պետք է նկատել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում և Օրենսգրքում առկա է օգտագործվող եզրութաբանության անհամապատասխանություն. եթե նշված օրենքում խոսքը միջանկյալ լուծարման հաշվեկշռի մասին է, ապա Օրենսգրքում օգտագործվում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ տերմինը, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է, և պետք է ապահովվի տերմինների միասնականությունը, և նշված օրենքում «միջանկյալ լուծարման հաշվեկշիռ» եզրույթը փոխարինվի «լուծարման միջանկյալ հաշվեկշիռ» եզրույթով: Նույն խնդիրն առկա է նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում, որի 75-րդ հոդվածում ևս օգտագործվում է «միջանկյալ լուծարման հաշվեկշիռ» բառակապակցությունը:

² Այս մասին առավել մասրամասն տե՛ս Սողոմոյան Ա. Մ. Հայաստանի Հանրապետությունում լուծարվող տնտեսական ընկերության պարտատերերի իրավունքների պաշտպանության որոշ հիմնահարցեր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ իրատ., 2015, էջեր 210-223:

ծի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը:

Հաստատված լուծարման հաշվեկշիռը լուծարման հանձնաժողովը ներկայացնում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին: Լուծարման հաշվեկշիռը, որը հաճախ գրականության մեջ անվանվում է նաև լուծարման վերջնական հաշվեկշիռ, արտացոլում է, թե ինչ գույք է մնացել լուծարվող ընկերության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչ գույք հնարավոր չի եղել բռնագանձել դեբիտորական պարտքի ստացման նպատակով, ինչի արդյունքում լուծարման հանձնաժողովի գործունեությունը դադարում է¹: 19-րդ դարի շվեյցարացի հայտի գիտնականներից մեկը՝ Ի. Ֆ. Շերը, հաշվեկշիռը համարել է հաշվետվողականության հիմքը. ըստ նրա՝ սկզբնական հեշվեկշիռը և եզրափակիչ հաշվեկշիռը ցանկացած հաշվետվողականության պահանջն է: Հաշվապահական հաշվետվությունը սկսում է հաշվեկշռով, իսկ ընկերության լուծարման ժամանակ ավարտվում է եզրափակիչ հաշվեկշռով: Եթե Օրենսգրքով լուծարման միջանկյալ հաշվեկշռի բովանդակությանը ներկայացվում են որոշակի պարտադիր պահանջներ, ապա լուծարման հաշվեկշռի պարագայում նման պահանջներ չկան նախատեսված ո՛չ Օրենսգրքով, ո՛չ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ո՛չ էլ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: ՌԴ օրենսդրության շրջանակներում այս հարցին կարգավորում է տրվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՌԴ օրենքով, որտեղ նշվում է, որ դրանում պետք է արտացոլվեն լուծարման միջանկյալ հաշվեկշռով հաստատված գործարքների կատարման արդյունքները: Նշենք նաև, որ արտասահմանյան գրեթե բոլոր երկրների օրենսդրությամբ նախատեսված է այս հաշվեկշռի կազմման և հաստատման պահանջը, օրինակ՝ «Ձեռնարկատերերի մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերի պահանջները բավարարելուց հետո իրավասու մարմինը ընդունում է ընկերության լուծարումն ավարտելու մասին որոշում, որում պետք է նշվի բոլոր հայտնի պարտատերերի պահանջների բավարարման մասին տեղեկատվություն: Այդ որոշումը ներկայացվում է իրավասու պետական մարմին և հանդիսանում է ընկերության գրանցումը չեղարկելու հիմք: Այսինքն, Վրաստանի քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ լուծարման հաշվեկշիռը փոխարինված է համապատասխան որոշմամբ: Իսկ Լատվիայի Առևտրային օրենքի 328-րդ հոդվածում, բացի լուծարման եզրափակիչ հաշվեկշռից, նախատեսված է նաև գույքի բաժանման նախագիծ կազմելու անհրաժեշտություն, որոնք կազմվում են միաժամանակ: Այսպես, ըստ նշված նորմի, պարտատերերի պահանջները բավարարելուց կամ օրենքով նախատեսված դեպքերում դրանք հետագայում բավարարելու նպատակով անհրաժեշտ դրամական միջոցները դեպոնացնելուց, ինչպես նաև լուծարման ծախսերը հոգալուց հետո լուծարողը կազմում է ընկերության լուծարման եզրափակիչ հաշվեկշիռը և գույքի բաժանման նախագիծը, որով սահմանվում են լիկվիդացիոն քվոտաները: Վերջիններս ստուգվում են ռեվիզորների կողմից: Այդ երկու փաստաթղթերը ուղարկվում են ընկերության բոլոր մասնակիցներին: Եթե դրանց կազմման ընթացքում թույլ են տրվել օրենքի, կանոնադրության կամ մասնակիցների ընդհանուր ժողովի որոշման խախտումներ, դատարանը շահագրգիռ անձի պահանջով կարող է պարտադրել, որ կազմվեն լուծարման նոր եզրափակիչ հաշվեկշիռ և գույքի բաժանման նախագիծ կամ էլ իրականացնել լուծարմանն ուղղված հավելյալ գործողություններ: Այսինքն, Լատվիայի քաղաքացիական օրենսդրությամբ ևս չի պահանջվում լուծարման հաշվեկշռի հաստատում համապատասխան մարմնի կողմից,

¹ St`u Телюкина М. В. նշված աշխատությունը, էջ 142:

² St`u Шер И. Ф. Бухгалтерия и баланс, 4-е изд., Пер. с нем. / Под. Ред. проф. Н. С. Луского – М., Экономическая жизнь, 1926, էջ 99:

այլ նախատեսված է հատուկ սուբյեկտի՝ ռեվիզորի կողմից այդ ակտերի ստուգման պահանջ, ինչպես նաև դատական կարգով դրանք վիճարկելու հնարավորություն: Էստոնիայի քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում լուծարման ո՛չ միջանկյալ, ո՛չ էլ եզրափակիչ հաշվեկշռի կազմման պահանջ, պարզապես դրա 45-րդ հոդվածով նախատեսված է, որ պարտատերերի պահանջները բավարարելուց, օրենքով նախատեսված դեպքերում անհրաժեշտ դրամական միջոցները դեպոնացնելուց, օրենքով նախատեսված դեպքերում պարտատերերին ապահովման միջոցներ տրամադրելուց և մնացած գույքը ընկերության մասնակիցների միջև բաշխելուց հետո լուծարողները դիմում են մասնավոր իրավունքի իրավաբանական անձին ռեզիստրից հանելու պահանջով¹:

Ինչպես տեսանք, տարբեր երկրներ որդեգրել են տարբեր մոտեցումներ լուծարման միջանկյալ և եզրափակիչ հաշվեկշռների կազմման և հաստատման վերաբերյալ: Սակայն մի բան հստակ է, որ զարգացման ներկայիս միտումները տանում են նրան, որ դրանք ենթակա չեն հաստատման այս կամ այն մարմնի կողմից, այլ ենթակա են ստուգման տարբեր սուբյեկտների կողմից կամ էլ կարող են վերանայվել դատական կարգով, իսկ որոշ դեպքերում ընդհանրապես չկա դրանց կազմման անհրաժեշտություն: Բանն այն է, որ նշված բոլոր երկրներում նախատեսված է լուծարման հանձնաժողովի անդամների պատասխանատվության վերաբերյալ հատուկ կանոններ, որոնք էլ վերացնում են դրանք ընդհանուր ժողովի կամ այլ մարմնի կողմից հաստատման անհրաժեշտությունը: *Ուստի, հաշվի առնելով վերորոգրյալը, գտնում ենք, որ լուծարման միջանկյալ հաշվեկշռի նման լուծարման հաշվեկշռի, որը, մեր կարծիքով պետք է վերանվանվի լուծարման եզրափակիչ հաշվեկշռ, քանի որ դրանք երկուսն էլ լուծարման հաշվեկշռների տարատեսակներ են, վերոբերյալ օրենսդրական նորմերը ենթակա են վերանայման և զարգացման ժամանակակից միտումներին համապատասխանեցման: Ժամանակային առումով ևս լուծարման եզրափակիչ հաշվեկշռը, մեր կարծիքով, պետք է կազմվի ոչ թե պարտատերերի պահանջները բավարարելուց, այլ մնացած գույքը մասնակիցների միջև բաշխելուց հետո: Հետևաբար առաջարկում ենք Օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պարտատերերի պահանջները բավարարելուց, իսկ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում պարտատերերի պահանջների հետագա բավարարման նպատակով դրամական միջոցները դեպոնացնելուց և ընկերության մնացած գույքը մասնակիցների միջև բաշխելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում և հաստատում է լուծարման եզրափակիչ հաշվեկշռը, որը օրենքով նախատեսված այլ փաստաթղթերի հետ ներկայացվում է իրավասու պետական մարմին՝ իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման համար: Լուծարման եզրափակիչ ակտը պետք է պարունակի տեղեկություններ իրենց պահանջները ներկայացրած պարտատերերի պահանջների բավարարման, վիճելի պահանջների, իրենց պահանջները չներկայացրած հայտնի պարտատերերի պահանջների բավարարման նպատակով անհրաժեշտ դրաման միջոցների դեպոնացման և մնացած գույքը իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) միջև բաշխելու վերաբերյալ:*

Լուծարման եզրափակիչ ակտը տրամադրվում է իրավաբանական անձի հիմնադիրներին (մասնակիցներին): Եթե դրա բովանդակությունը հակասում է օրենքի, իրավաբանական անձի կանոնադրության պահանջներին, հիմնադիրները (մասնա-

¹ <https://v1.juristaitab.ee/sites/www.juristaitab.ee/files/elfinder/ru-seadused/%D0%97%D0%90%D0%9A%D0%9E%D0%9D%20%D0%9E%D0%91%20%D0%9E%D0%91%D0%A9%D0%95%D0%99%20%D0%A7%D0%90%D0%A1%D0%A2%D0%98%20%D0%93%D0%A0%D0%90%D0%96%D0%94%D0%90%D0%9D%D0%A1%D0%9A%D0%9E%D0%93%D0%9E%20%D0%9A%D0%9E%D0%94%D0%95%D0%9A%D0%A1%D0%90.pdf> (վերջին այցելությունը՝ 13.07.2020 թվական):

կիցները) այն ստանալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում, կարող են այն դատական կարգով վիճարկել»:

Լուծարման հաշվեկշռի հաստատումից հետո մինչև իրավաբանական անձի դադարումը, համաձայն Օրենսգրքի 69-րդ հոդվածի 6-րդ կետի, իրավաբանական անձի մնացած գույքը հանձնվում է նրա հիմնադիրներին (մասնակիցներին), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ: Արդեն նշել ենք, որ իրավաբանական անձի մնացած գույքի բաշխումը պետք է տեղի ունենա նախքան լուծարման եզրափակիչ հաշվեկշռի հաստատումը, դրա արդյունքները պետք է արտացոլվեն հաշվեկշռի մեջ, քանի որ դրա արդյունքում, մեր կարծիքով, հնարավոր կլինի բարձրացնել այդ գործընթացի թափանցիկությունը: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որն ունի «Լուծարվող ընկերության գույքի բաշխումը բաժնետերերի միջև» վերտառությունը, նախատեսում է, թե ինչ հաջորդականությամբ պետք է լուծարման հանձնաժողովը Ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը բաշխի բաժնետերերի միջև: Նույն օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետը նախատեսում է, որ լուծարվող Ընկերության պարտավորությունների վերաբերյալ պարտատիրոջ հայցով դատարան դիմելու դեպքում Ընկերության գույքը ենթակա չէ բաժանման բաժնետերերի միջև՝ մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Սակայն նման եղանակով լուծարման գործընթացը անհարկի ձգձգելը, մեր կարծիքով, արդարացված չէ, փոխարենը կարելի է օրենքով նախատեսել նման իրավիճակները կարգավորելու այլ մեթոդներ: Օրինակ, պարտատերերի իրավունքների պաշտպանության նպատակով ՌԴ քաղաքացիական օրենսգրքում 05.05.2014 թվականին ներմուծվել է 64.1 հոդվածը¹, որն ունի «Լուծարվող իրավաբանական անձի պարտատերերի իրավունքների պաշտպանությունը» վերտառությունը: Դրա առաջին կետով նախատեսված է, որ եթե լուծարման հանձնաժողովը չի բավարարում պարտատիրոջ պահանջը կամ հրաժարվում է այն քննարկել, մինչև լուծարման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի դիմել դատարան լուծարվող իրավաբանական անձի՝ իր նկատմամբ ունեցած պարտավորությունները բավարարելու պահանջով: Նրա պահանջի բավարարման դեպքում պարտավորությունները մարվում են Օրենսգրքով նախատեսված հերթականությամբ: Վերևում արդեն ներկայացրել էք այդ հարցի լուծման վերաբերյալ այլ երկրների փորձը և, և մեր կարծիքով՝ նման դեպքերում լուծարման գործընթացը

¹

չպետք է կասեցվի, այլ փոխարենը նման պահանջների հետագա բավարարման նպատակով, եթե դատարանը վճիռը կայացնի հոգուտ պարտատիրոջը, համապատասխան դրամական միջոցները պետք է դեպոնացվեն բանկում այդ նպատակով բացված հաշվի վրա, կամ այդ պարտատիրոջը տրամադրվեն պարտավորության կատարման ապահովման միջոցներ, իսկ լուծարման գործընթացը շարունակվի: Այս պարագայում, սակայն, կարող է հարց ծագել, թե ինչպես պետք է վարվել այդ դրամական միջոցների կամ ապահովման միջոցների հետ, եթե դատարանը պարտատիրոջ հայցը չբավարարի: Այդ դեպքում նշված դրամական միջոցները կամ ապահովման միջոցը պետք է անցնեն ընկերության մասնակիցներին՝ իրենց արդեն լուծարված ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությամբ համապատասխան:

Ուստի առաջարկում ենք, որ «Քաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 10-րդ կետը ճանաչվի ուժը կորցրած, փոխարենը Օրենսագրով նախատեսել ունիվերսալ լուծում բոլոր իրավաբանական անձանց, այդ թվում բաժնետիրական ընկերությունների համար: Այսպես, առաջարկում ենք, որ Օրենսագրի 69-րդ հոդվածը լրացվի 6.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «6.1 Լուծարվող իրավաբանական անձի պարտավորությունների վերաբերյալ պարտատիրոջ հայցով դատարան դիմելու դեպքում գույքը կարող է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) միջև բաշխվել, եթե այդ պահանջների հետագա բավարարման նպատակով համապատասխան դրամական միջոցներ դեպոնացվեն բանկում այդ նպատակով բացված բանկայի հաշվի վրա, կամ պարտատիրոջը տրամադրվեն պարտավորության կատարման ապահովման միջոցներ: Դատարանի կողմից պարտատիրոջ պահանջը չբավարարվելու դեպքում այդ դրամական միջոցները կամ ապահովման միջոցներն անցնում են լուծարված իրավաբանական անձի հիմնադիրներին (մասնակիցներին) դրա կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությամբ համապատասխան»:

Լուծարման գործընթացը եզրափակող վերջին՝ երրորդ խումբ գործողություններն ուղղված են իրավաբանական անձի դադարմանը: Օրենսագրի 69-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանվում է, որ իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած պետական գրանցման պահից: Այսինքն՝ ժամանակային առումով այս երկու գործողությունները համընկնում են: Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման ձևը կարգավորված է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով: Վերջինիս 51-րդ հոդվածով սահմանված է, որ լուծարվող իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը լուծարման գործընթացն ավարտելուց հետո նույն օրենքի 50-րդ հոդվածով՝ նախատեսված փաստաթղթերը ներկայացնում է գործակալություն՝ լուծարման պետական գրանցում կատարելու համար, իսկ օրենքի 52-րդ և 53-րդ հոդվածները՝ կարգավորում են լուծարման գրանցումը մերժելու հիմքերը և կարգը: Այդ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետում իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման համար ներկայավող փաստաթղթերի շարքում, ի թիվս այլոց, նշված է նաև տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին»¹ Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման մասին, իսկ այդ նորմի համաձայն՝ այլ իրավաբանական անձանց լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը կազմակերպում է լուծարվող կազմակերպության գործունեությամբ առաջացած անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայն-

¹ ՀՀՊՏ 2004.07.14/38(337):

քային արխիվ: Այս խնդրի հետ կապված՝ տարբեր երկրներ տարբեր մոտեցումներ են որդեգրել. օրինակ՝ ըստ Էստոնիայի քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր մասի՝ դադարած իրավաբանական անձի փաստաթղթերը հանձնվում են լուծարողի կամ երրորդ անձի պահպանությանը: Դրանք պահվում են տասը տարի, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Սկզբունքորեն էական նշանակություն չունի, թե ով կպահպանի այդ փաստաթղթերը, սակայն, մեր կարծիքով, ՀՀ օրենսդրությամբ նեղացվել է այն փաստաթղթերի շրջանակը, որոնք ենթական են պահպանության՝ սահմանափակվելով միայն լուծարվող կազմակերպության գործունեությամբ առաջացած՝ անձնակազմին վերաբերող փաստաթղթերով, սակայն, մեր համոզմամբ, պետք է պահպանության հանձնվեն լուծարված իրավաբանական անձի բոլոր փաստաթղթերը:

Իրավաբանական անձի լուծարման ընթացակարգի վերաբերյալ սկզբունքային ենք համարում դրա իրակացման ժամկետների հետ կապված հարցի քննարկումը: Ներկայումս ո՛չ Օրենսգիրքը, ո՛չ էլ հարակից օրենքները չեն նախատեսում լուծարման ընթացակարգի իրականացման ո՛չ նվազագույն, ո՛չ էլ առավելագույն ժամկետներ¹: Սակայն լինելով բավականին բարդ գործընթաց՝ լուծարումը շատ հաճախ գործնականում իրականացվում է խախտումներով կամ բացթողումներով, և օրենսդրության ոչ բոլոր պանանջներն են բարեխղճորեն կատարվում լուծարման գործընթացում ներգրավված անձանց կողմից, որպիսիք բացասական կարող են անդրադառնալ լուծարման գործընթացին առնչվող սուբյեկտների իրավունքների վրա: Սուբյեկտների թվին, որոնց շահերը կարող են ոտնահարվել լուծարման գործընթացի արդյունքում, կարելի է դասել պարտատերերին, ինչպես նաև հենց լուծարվող ընկերության մասնակիցներին: Մենք գտնում ենք, որ օրենքում լուծարման գործընթացը կարգավորող ժամկետների, ինչպես նաև դրանց խախտումների համար պատասխանատվության բացակայությունը կարող է գործնականում հանգեցնել բազում խնդիրների: Նման խնդիրներից մեկը օրենսդրի կողմից նպաստավոր պայմանների ստեղծումն է լուծարման գործընթացը արհեստականորեն ձգձգելու համար, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել երրորդ անձանց իրավունքների ոտնահարմանը և ապակառուցողական ազդեցություն ունենալ քաղաքացիական շրջանառության վրա: Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ նման իրավիճակը բավականին խնդրահարույց է, և այն կարելի է լուծել՝ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ անելով: Լուծարման ժամկետների խնդրի առնչությամբ կարելի է առաջ քաշել լուծման երկու տարբերակ. մասնավորապես՝ առաջին տարբերակով կարելի է առանձին ժամկետներ նախատեսել լուծարման գործընթացում ներառված առանձին փուլերի համար, օրինակ՝ ժամկետներ նախատեսել պարտատերերի պահանջների բավարարման, լուծարվող ընկերության դեբիտորական պարտքի հավաքման և այլ գործողությունների իրականացման համար: Իսկ երկրորդ տարբերակը լուծարման ողջ գործընթացի համար ընդհանուր ժամկետ սահմանելն է: Մեր կարծիքով՝ երկրորդը ավելի նպատակահարմար է, քանի որ այդպիսով լուծարման գործընթացում ներգրավված սուբյեկտները այս կամ այն գործողությունն իրականացնելիս սահմանափակված չեն լինի օրենքի իմպերատիվ նորմերով նախատեսված ժամկետներով, իսկ անհրաժեշտության դեպքում իրենք կարող են լուծարման կարգն ու ժամկետները սահմանելիս նախատեսել կոնկրետ

¹ Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև մասնագիտական գրականության մեջ, և քննադատվել է օրենսդրի այն մոտեցումը, որ լուծարման գործընթացը կարող է չունենալ ժամկետային սահմանափակվածություն: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ՝ **Назаров И. Д.** О проблеме отсутствия детального урегулирования сроков ликвидации юридических лиц, Серия «ВЕСТНИК СВФУ», № 4 (08), 2017, 96-99 էջեր, **Логвина К. Е.** Срок ликвидации юридических лиц, Молодой ученый. 2020, № 8 (298), էջեր 162-163:

ժամկետներ առանձին փուլերի համար: Կարծում ենք, որ լուծարման ողջ գործընթացի համար կարելի է նախատեսել 12-ամսյա ժամկետը, քանի որ դա այն օպտիմալ ժամկետն է, որի ընթացքում, հաշվի առնելով օրենքով նախատեսված պարտադիր գործողությունների իրականացման անհրաժեշտությունը, կարելի է արդյունավետորեն կազմակերպել այդ գործընթացը: Ուստի մենք առաջարկում ենք Օրենսգրքի 69-րդ հոդվածը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Իրավաբանական անձի լուծարումը պետք է իրականացվի 12-ամսյա ժամկետում: Այդ ժամկետը կարող է երկարացվել միայն դատարանի որոշմամբ մինչև 6 ամիս ժամկետով»¹:

Անփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ գործնական առումով Օրենսգրքով և հարակից օրենքներով իրավաբանական անձանց լուծարման կարգի վերաբերյալ նախատեսված նորմերը ենթակա են արմատական փոփոխությունների: Դրանք մեծապես կրում են խորհրդային քաղաքացիական իրավունքի ազդեցությունը և համահունչ չեն ժամանակակից զարգացումներին, հատկապես վտանգված է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման հրամայականը, քանի որ ներկայիս իրավակարգավորման պայմաններում տնտեսական ընկերությունների լուծարման գործընթացը կարող է տևել տարիներ՝ առաջ բերելով անորոշություն և քաղաքացիական շրջանառության այլ սուբյեկտների իրավունքների ոտնահարման սպառնալիք: Կարևորվում է նաև այնպիսի իրավակարգավորումների նախատեսման անհրաժեշտությունը, որոնք կապահովեն լուծարվող ընկերության պարտատերերի և պարտապանների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

¹ Նշենք, որ ՌԴ-ում նման սահմանափակում նախատեսված է միայն սահմանափակ պարտախանառվությամբ ընկերությունների կամավոր լուծարման դեպքում <https://ppt.ru/news/140202> (վերջին այցելությունը՝ 8.07.2020 թվական): Սակայն, մեր կարծիքով, այդ կանոնը պետք է տարածվի բոլոր իրավաբանական անձանց և հատկապես տնտեսական ընկերությունների նկատմամբ՝ քաղաքացիական շրջանառության անխաթար զարգացումն ապահովելու, ինչպես նաև ընկերության մասնակիցների ու պարտատերերի իրավունքները պաշտպանելու նպատակով: Իսկ, օրինակ՝ «Ձեռնարկատերերի մասին» Վրաստանի օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված է առևտրային ընկերությունը լուծարելու համար ընդամենը 4 ամիս ժամկետ՝ սկսած լուծարման գործընթացի գրանցման պահից հաշված, իսկ հարկային ստուգումները երկարելու դեպքում՝ իրավասու մարմնի կողմից այդ ստուգումներն ավարտելու վերաբերյալ տեղեկություն ստանալուց հետո՝ մեկ ամիս անց <https://matsne.gov.ge/ru/document/download/28408/47/ru/pdf> (վերջին այցելությունը 9.07.2020 թվական):

ПОРЯДОК ЛИКВИДАЦИИ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ

Ашкен Согомонян

Преподаватель кафедры гражданского права ЕГУ

В статье рассматриваются особенности установленного законодательного порядка ликвидации коммерческих организаций. На основании анализа правового регулирования порядка ликвидации автор указывает на его основные недостатки и вносит предложения, направленные на совершенствование отдельных законодательных положений.

THE PROCEDURE FOR LIQUIDATION OF COMPANIES

Ashkhen Sogomonyan

Lecturer at the YSU Chair of Civil law

The paper discusses the established legal liquidation procedure for commercial organizations. Basing on the analysis of the legal regulation of liquidation procedure, the author lists its basic shortcomings and makes suggestions to improve certain legal provisions.

Բանալի բառեր – լուծարման ընթացակարգ, փուլեր, ժամկետ, լուծարման հաշվեկշիռ, լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, լուծարման հանձնաժողով, պարտատերերի իրավունքների պաշտպանություն, գույքի բաշխում

Ключевые слова - порядок ликвидации, этапы, сроки, ликвидационный баланс, промежуточный ликвидационный баланс, ликвидационная комиссия, защита прав кредиторов, распределение имущества

Key words - liquidation procedure, stages, deadlines, liquidation balance sheet, interim liquidation balance sheet, liquidation commission, protection of creditors' rights, distribution of property